Այդ երկու դէպքերը ակիզբ դրին Բագուայ նախկին խաների երեւան գալուն յանձին Հէյբաթի որդի Դատգեա - Ղուլիի, որ մի հասարակ թուրք էր Բագուայ զաւառի Թամանի գիւղից։ Այդ թուրքը գլխաւոր յանցաւորն էր վերոյիշեալ երկու սպանութիւնների մէջ։ Սպանութեան մասնակցեցին նորա երկու գործակից եղբայրները Մահմուտը և Ահմէտը, որոնք Թամանիի հարեւան Ամիրջան գիւղից էին։

Դերգեա - Ղուլին խիստ երկարահասակ տղամարդ էր հրաշալի հսկայական արտաքին կերպարանքով և արտասովոր ուժի տէր լինելով, ոչ ոք չէր կարող նորա ախոյանը հանդիսանալ գոտեմարտի ժամանակ։ Ժողովրդի ներկայութեամբ այդ հսկան վոր ձում էր իւր ոյժը. նա մի քանի անգամ ուղտ է բարձրացրել և իւր ուսերի վրայ ման ածել և մի անգամ էլ այդպիսի վարժութեան ժամանակ տեղահան է արել ուսը, որ և շուտով տեղն են գցել։

Հնդկացու սպանութիւնից յետոյ Դեր - գեա - Ղուլին դարձաւ ժողովրդական անձնաւորութիւն, վայելում էր ընդհանուրի յարգանքը և ժողովուրդը միաձայն ընտրեց նորան (1720 թուականների մօտերքը) իրա համար իբրեւ երկրի կառավարիչ՝ տալով նորան իւզբաշի անունը։

Ժողովուրդը կառավարելու խաղաղութեամբ և անձնական պաշտպանութեան ու թշնամիների դէմ մաքառելու համար հարկաւոր էին նիւթական միջոցներ, որ չէր կարող ամբողջովին ձեռք բերել, առանց ժողովրդին ծանրաբեռնելու։

Դորա համար էլ Դերգեա Ղուլի իւզբաշին մտածեց իւր իրաւասութեան տակ առնել հանքային արդիւնաբերութիւնը, որի եկամուտը հասցնում էր Շամխալին։ Իւր դիտաւորութիւնը գլուխ բերելու համար գտաւ մի միջոց, ոչնչացնել Մաշտաղա գիւղում գտնուող Շամխալի հաւատարմատարին և նորա մարդկանց։ Սպանման գործը ինքը իւզբաշին անձամբ չկատարեց, այլ յանձնարարեց իւր վերոյիշեալ երկու եղբայրներին, Մահմուդին և Ահմադին, որոնք մի քանի նշանաւոր քաջերի հետ միասին յանկարծակի յարձակուեցին Շամխալցիների վրայ և ոչնչացրին նոցա։

Երբ Շամխալը իմացաւ իւր մարդկանց հետ պատահած յան-